— Այո՛, նա ամէն բան գիտէ, նա միայն իմ մտերիմս է:

— Ի՞նչ կը թսես, միթէ՞ կարելի է այդ դաժան ծերը…

— Այդ դաժան ծերը ինձ համար ամենաքաղցր հայը մ'է, նա զիս կը մխխթարեր քու կորսայեանդ վրայ, վասնզի նա միայն գիտէր, թէ ես կը սիրեմ զքեզ: Հիմա քաջ եղիր պատերազմի մէջ, բայց մի՛ մոռնար ինքզինքդ պահպանեւ Թենիիդ համար:

— Օ՜հ, ի՜նչ երջանկութիւն, դու զիս այսչա՜փ կը սիրես, Թենի:

— Ինչչա՜փ կրնամ սիրել: Բայց դու այդ քու քեռուոյդ՝ սքանչելի մարդուն՝ Աուրենի մեր սիրոյն գաղտնիթը չէի՞ր յայտնած:

— Ինչպէ՞ս, ի՞նչ երեսով յայտնէի շղթայակապ եւ անյոյզ գրեթէ, եթէ իմ երագներս զրուցէի ապահով էի, որ զիս պիտի ծաղրէր:

Այս խօսակցութեան մէջ Գրիգորի աթոռն այնչափ մօտեցեր էր բազմոցին, որ իւր ծունկերը Թենիի ծնկվներուն սկսէր էին դպիլ:

— Հիմա էլ, սա գրադարանին մէջեն,— ըսաւ Օրիորդը հատոր մը ցցնելով,— այդ գիրքն ինձի տուր:

Գրիգոր գնաց գիրքն առաւ, եւ երբ դարձաւ՝ տեսաւ, որ աթոռն իր առաջի տեղը դրուած էր, Թենիի նայեցաւ, որ ժպտելով՝

— Ապահով եղիր, զրուցեց, որ Ատոմ հայրիկ ո՛ւր որ է, կ'ուգայ հիմա զմեղ կը գտնէ. ուստի տեղդ հանդարտ նստէ: Իսկ այդ գիրքն ա՛ռ, մի՛ բանար, մի՛ խախտեր մատենակապը, մի՛ կարդար, դիր քու պայուսակիդ մէջ, մինչեւ որ վաղը ճամփայ ելնես: Խօսք տո՛ւր:

— Մեր սիրոյն վրայ խօսք կ'ուտամ. եւ եթէ կ'ուզես՝ հիմա կ'ուտամ Զաւէնի, որ պահէ եւ ան ատեն միայն ինձ տա…

Այս միջոցին դուռը ճռնչեց, եւ Ատոմ ներս մտաւ:

— Խօսքերնիդ վերջացա՞յ վ, հայրիկ,— հարցուց Թենի:

— Այո. հիմա դու գո՞հ ես, Թենի: